

ՔԻՒԶԱՆԴՈԿԱՆ ԿԱՅՍՐՆԵՐԻ ԿԱՐԴԱՌՈՒԹ-  
ԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ,

ՊԵՏՐԵԿԱՆ ՀԵՑՈՒԵՒՆԻԵՐ

VI և IV ԴԱՐԱՐԻՆ, ՎԵՐԱԲԵՐԵԱԼ, \*)

ՄԱՍԻ ՎԱՐՉԱՆԱՆ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ

Նօվէլլա (novella օրէնք) XXXI. տիտղոս (պրակ) X.  
Հայաստանի բաժանման<sup>1)</sup> մասին չորս պաշտօ-  
նեանների միջև։

Կայսրն Յուստինիանոս Արևելեան սրբազան Դատա-  
րանների մեծափառ Գահերէց<sup>2)</sup>, նախկին հիւպատ և

\*) Տես «Առմավ» № 2. Մարտ—Ապրիլ 1902.

1) Հայաստանի լունական բաժնի գաւառների վարչա-  
կան փոփոխումներն ու բաժանումները թէ Յուստինիանոսից  
առաջ (Խոր. գր. III. գլ. խր., Զամէ. ա. 474, և ալն) և թէ  
ինույլ քանից կրկնուել են զանազան ձեռովկի, կարգադրու-  
թեամբ և նուաճումներով. (Պատմ. Սերէսու. Պետերք, 1879,  
45, 77, 180, 185 և հետեւելներ, Զամէ. հ. բ. եր. 523, և հ.  
հ. տես «Հանդ. Ամս.» 1902, 1—3 «Սկզբնաւոր. Բիւզանդ. Բա-  
նակաթեմ» վերնագրով հետաքրքիր տղուածը և նունպէս  
Collect. des Hist. Arm. par V. Langlois, t. II. p. 164.)։

2) Préfet des sacrés pretoires d'Orient—բիւզանդական  
կայսրութեան ալս մեծ պաշտօնեալի, կոչումը, որ ներկայ  
դէպքում ես թարգմանում եմ հայերէն «արեւելեան սրբազան  
պատարանների գահներէց» տիտղոսով՝ հոռմա-բիւզանդական  
պատմութեան ալլ և ալլ շըջաններում զանազան փոփոխու-  
թեանների է ենթարկուել թէ իւր բազմատեսակ պաշտօնների  
իրաւասութեանց և թէ իւր թուի նկատմամբ. Մօնակսքեօն  
և որ ալս կոչումն կրող պաշտօնեաններին «իրանց ժամանակ-  
ների գրեթէ մեծ վիզիթներ» է անուանում. Յուստինիանոսի  
օրով քաղաքացիական, դատաստանական և ելեմտական վար-  
չութեանց զլուխ էր հանդիսանում կ. Պօլսում և մի տեսակ

պատրիկ Յովհաննէսին <sup>3)</sup>:

Յառաջաբան.

Եթէ կան բաներ որ իրանց խտոնակ դրութեամբ լաւ կարգաւորեալ վիճակի են հասնում, ուրիշ անթիւ բաներ էլ կան, որ երբ ցրուած և անկապ դրութեան մէջ են, իբր ամօթալի, անշնորհք և մութն ու անկարգ են երեսում՝ թէև պատուաւոր, զարդարուն և շատ պարզ ու շատ որոշ էլ լինին:

Այս ճշմարտութեան հետեւլովն է որ՝ հայերին կառավարող վարչութեան <sup>4)</sup> վրայ հայեացք ձգելուց յետով, մենք համոզուեցանք թէ հարկաւոր է, որ այդ վարչութիւնը աւելի կատարեալ մի ներդաշնակութիւն ունենալ. և որ եթէ գորա ձեւը աւելի հաստատուն դարձնենք, փրկարար մի ոյժ և աւելի վայելուչ կարգաւորութիւն կը ստանալ:

Գլուխ 1.

Հետեւաբար մենք ստհմանում ենք Հայաստանում չորս գաւառ: — Մէկը կը կոչուի Ներքին <sup>5)</sup>, և երեմն Բազանիս կամ Լէոնտոսօլոյիս անուանեալ քաղաքը որ ալժմ մեր անունն է կը սում <sup>6)</sup>, կը լինի այս ներքին

առաջին միսիստր-նախարարի լիազօր իշխանութիւն ունէու (*Տես ևս Ch. Diehl, Gr. Ep. p. 561*).

<sup>3)</sup> Յուստինիանոս կաւար յարտնի զօրավար-պալատականներից մէկն էր նոնապէս և այս ովհ՝ ննէսը, որի անունը սակայն Բէլիզարիոս և Ներսէս նշանաւոր զօրապետների հրոշակով համարեալ նստամածել է.

<sup>4)</sup> Այս «վարչութիւնը», ինչպէս երեսում է, նախ առվորական կամ հասարակ վարչութիւն էր կալսերական գաւառի, որ և ապա Յուստինիանոսը փոխհիւպատ սութեան և կոմսութեան է վերածում:

<sup>5)</sup> Ընդգծումները իմա են: — «Ներքին գաւառ» ասելով՝ կարծեմ ուզում է որոշել ի՞ն նական բաժնի հիսկսարին ալս գաւառը օտար երկրներին սահմանակից միւս հալկական գաւառներից:

<sup>6)</sup> Անշուշտ՝ Թէոդոսուսօլիս և Սատալա քաղաքներից դէպի արևմուտ գտնուած Neo Caesarea—նոր Վեսարիա կոչուած քաղաքը ըստ հռոմ. հին աշխարհազր. տախտակի:

գաւառի մայրաքաղաքը։ Այս գաւառը, որ կառավարուել է ամենապերճ Ակակիոսի<sup>7)</sup> ձեռքով, մենք արժանի ենք կացուցանում մի փոխ - հիւպատութեանտ Ալն պաշտօնեան, որին կ'անուանենք նորա տեղ՝ սպէկտարիլիսի<sup>8)</sup> աստիճան կ'ունենալ և կը վայելէ այս աստիճանին լատկացրած բոլոր պատկւները, որովհետեւ մենք այս պաշտօնեալին կը զարդարենք հիւպատու, թեան պատմուճանով և այլ առանձնաւոր պատկանելիքներով<sup>9)</sup>։ Սորա իրաւասութեանն ենք ենթարկում Թէոդոսուպոլիսը<sup>10)</sup>, որ և էր արդէն, լեռոյ քաղաք-ներ - Սատալա<sup>11)</sup>, Նիկոպոլիս<sup>12)</sup> և Կոլոնիա<sup>13)</sup>, որ-

7) Տես Ժանօթ. 16-րդ «Լումար № 2, 1902».

8) Կալորութեան պաշտօնեաները իսկական մի ազնուապետութիւն կազմելով՝ վեց կարգի էին բաժանում այլ և այլ պատուանուններով, կալսերադն իշխաններին կոչում էին — nobilissimi (նօրիլիսուիմի-ազնուս զարմ). առաջին կարգի պաշտօնեաններին՝ illustres (իւլիստրէս-մնծապալծառ). երկրորդ կարգի՝ spectabiles (սպէկտարիլէս-շքեղութիւն). երրորդ կարգի՝ գաւառական կառավարիններին և «լին-clarissimi (կլարիսսիմի-գերապաւծառ)։ և վերջապէս վերօլիշեալներից ստորին՝ չորրորդ և հինգերորդ կարգի պաշտօնեաններին՝ perfectissimi և egregii (այնովէկտիսախմի և էդրէզի-կատարելութիւն) և ալին։

9) Արդարի՝ Յուստինիանոսի ժամանակ մանաւանդ շատ տեսակ պաշտօնական հարուստ պատմուճաններ, լարդուզարդի նշանազգեստներ, զանազան ոսկեմանած ճոխ զարդարանքներ և իւնկազին բենեգեալ զգեստներ սկսեցին զործածել Բիւզանդիոնում, որի մեծաճոխ արքունիքը լիշեալ կարս սեր օրով մի շքեղ վաւահնեղութիւն էր ներկաւացնում առաւելապէս կամրութեան բարձրասահճան պաշտօնեանների վարդամբ։ (Տ. նոնսէս Ch. Diehl, Empre. de Byzance, Paris 1901)։

10) Երզում կամ քաղաքն Կարնոլ (Կարանա), տես Խոր. գ. III. գլ. ծի., և Collect. d'Hist. Arm. par. M. Brosset, S. Pétersb. 1876 t. II. p. 382.

11) Սատաղ կամ Սատաղացւց քաղաք՝ ամժմ աւերակ Զիփուլիկի վիճակում, Ճորոխ զետի ակունքների մօտ. (Ալիշ. Տեղ. Հ. Սեծ. եր. 42. տես նոլնպ. Lebeau t. VII. p. 14), Սեբէսո զլ. իգ եր. 77, և Collec. des hist. Arm. par. V. Langlois t. I. p. 180).

12) Կարինից և Սատաղացւց քաղաքից դէպի հիւսիսարևմուտ՝ Նրկրորդ Հալքում, այժմեան Շապին-Կարահիսար, (Ինճ. Աշխ. Վենետ. եր. 326, տես նոլնպ. Fd. Dular. Hist. de l'Egl. aîm. orient. Paris, 1859. p. 24).

պէս առաջ կոչւում էր սա, և որ ալժմ անջատում ենք Առաջին Հայքից.<sup>14)</sup> ապա՝ Տրապիզոնա<sup>15)</sup> քաղաքը և վերջապէս Կերասունտը<sup>16)</sup>, որ պատկանում էր Պողէմոննեան Պոնտոսին<sup>17)</sup>: Այս բոլոր քաղաքները երբեմն կառավարում էին մասամբ գաւառուկան նախազահ կլարիսիմի և մասամբ էլ սպէկտարիլիս կառավարիչների ձեռքով: Այս կերպով Ենոքին գաւառը Հայաստանի կը պարփակէ իւր մէջ եօթը քաղաք իրանց ստորադրումներով:

§ 1. Երկրորդ գաւառը կը կազմուի այն մասից, որ կոչւում էր Առաջին Հայք<sup>18)</sup> և որի մայրաքաղաքն է Սներաստիա<sup>19)</sup>: Ահաւասիկ այն քաղաքները, որոնցից մենք կազմում ենք այս գաւառը. - Սներաստուպօլիս<sup>20)</sup>, որ նոյն այս գաւառումն էր արդէն, Կոմանա<sup>21)</sup>, որ պատկանում էր Պողէմոննեան Պոնտոսին, Զէլա<sup>22)</sup>, որ մասն էր Հեղինէպոնտոսի և վերջապէս Բրիզա<sup>23)</sup> քաղաքը: Այս երկրորդ գաւառը իւր տարածութեան մէջ կը պարփակէ և բարեմն հինդ քաղաք, և կը շարունակուի կառավարուիլ մի նախագահ կառավարչի ձեռքով, որին կը վերապահենք նոյն իշխանութիւնը և նոյն աստիճանի կարգը:

## § 2. Այնուհետև մենք կազմում ենք Երրորդ:

<sup>13)</sup> Կողոնիա՞ Երկրորդ Հայքից և Նիկոպոլսից հիւսարևմտու ըստ հայկ. հին աշխ. տախտակի: Արդեօք ալժման Կոլունա գիւղ? (տես ինձ. Աշխ. եր. 397, Խոր. գ. Ռ. գլ. գ. Եր. 73. և Chronologie Arm. թագ. Ed. Dulaure. p. 371):

<sup>14)</sup> Ահշուշու ըստ լուսական բաժանման Փոքր Հայքի:

<sup>15)</sup> <sup>16)</sup> Տրապիզոն և Կերասունտ լալտնի քաղաքները:

<sup>17)</sup> Տրապիզոնի այժման նահանգը:

<sup>18)</sup> Գարձեալ ըստ լուսական բաժանման Փոքր Հայքի:

<sup>19)</sup> Սևաստ կամ ալժմ. Սըվալ. հին Սներաստիա կամ Կարիբա:

<sup>20)</sup> Կամ Գաղիւրա՝ Եւղոկիալից հիւս. արևմ.

<sup>21)</sup> Կոմանա պոնտացւոց ըստ աշխ. հին տախտակի, և երակ ալժմ. երկու ժամ հեռու Եւղոկիալից:

<sup>22)</sup> Զեղա կամ Զիլէ և Զէլական գաւառ: (Այս մասին տես ի թիւս ալլոց և Հ. Գ. Սրուանտձեանի Թորոս Ազբարը):

<sup>23)</sup> Բերիսա՝ ըստ հոռմ. հին աշխ. տախտակի պոնտական Առմանալից հարաւ. արևմ.

Հայք գաւառոր այն մասից, որ կօչւում էր Երկրորդ Հայք և որի մալրաքաղաքն է Մ'նլիտինէ<sup>24)</sup>: Այս նըշանաւոր նախնի քաղաքը կառուցուած է մի գեղեցիկ տեղ, պարզ երկնքի տակ՝ Եվբրաս գետի հովտից փոքր ինչ հեռու:

Ներկայիւս մենք պարտաւոր ենք համարում տալ այս գաւառին սպէկտարիլիս աստիճան կրող մի պաշտօնեալ, որ կը կոչուի կոմս Յուատինիանոս անունով և կը ստանալ տարեկան ոռճիկ եօթը հարիւր (700) ոսկեգրամ, իսկ սորա փոխանորդը - եօթանասուն և երկու (72) ոսկի: Այս կոմսի պալատական խորհրդանոցին նըշանակում ենք երեք հարիւր վաժուուն (360) ոսկի: Այս պաշտօնեալին շնորհում ենք այն բոլոր իրաւունքները, որ յատուկ են իւր պաշտօնէութեան տեսակին: Սորա պալատական խորհրդանոցը, որ կը շարունակէ վարել իւր առաջուայ պաշտօնը, կը զբաղուի գլխաւորապէս հարկերի հաւաքմամբ և կ'անուանուի կօմիցիում՝<sup>25)</sup> պահելով միանդամայն իւր նախընթաց իւրաւունքները:

Այս հրամանիս համաձայն՝ Երրորդ Հայքը կ'ընդգրկէ երբեմն Երկրորդ Հայքին պատկանած վեց քաղաք՝ — այն է Արկա<sup>26)</sup>, Արաքիսում<sup>27)</sup> Արիարսա-թէա<sup>28)</sup> և միւս նոմանա, որ Խորուզա<sup>29)</sup> և է կոչում, և որ պէտք է զանազանել Երկրորդ Հայքին յատկացրած նոյնանուն քաղաքից, և վերջապէս կուկուզ<sup>30)</sup> քաղաքը:

<sup>24)</sup> Ազմանան Մալաթիա քաղաքից փոքր ինչ դէպի արևելք:

<sup>25)</sup> Ալսինքն խորհրդաժողով՝ հասարակաց ալլ և ալլ կարեսոր գործերի մասին խորհուրդ անելու համար:

<sup>26)</sup> Արկաս՝ ըստ հայկ. հին աշխ. տախտ. Մելիտինէից արևմուտ:

<sup>27)</sup> Կամ Արաքիսուս (տես անդ. աշխ. տախտ.):

<sup>28)</sup> Արիարաթիրա կամ Արիարաթիա ը. հոռմ. հին աշխ. տախտ. Մերտսատիալից հարաւ. Առաստիա? ըստ Մերէսուի:

<sup>29)</sup> Գամիրքի կամ Կապադովկիալի կոմանա քաղաքը. (տես նոյնպ. «Արարատ» ամսագիր 1892 թ. լունիսի տեսրակը):

<sup>30)</sup> Այսինքն Կոկիսոն. (տես ի թիւս ալլոց նոյնպէս Տեղադր. Հ. Ն. Սարգիսեանի Վենետ. 1864, 61):

§ 3. Վերջապէս մենք կազմում ենք Զորքորդ չայք, որ երբեմն որպէս գաւառ հաստատուած չը լինելով և բաղկացած գանազան քաղբարոս անուններ՝ կրող մի քանի ժողովրդներից, որպիսիք են — ծոփանէն <sup>31</sup>, Անզիթէն <sup>32</sup>), ծոփէն <sup>33</sup>), Ասթիանէն <sup>34</sup>) և Բաղարիթէն <sup>35</sup>) — կառավարուել է սատրապների ձեռքով։ Բայց ի նկատի ունենալով, որ սատրապ անունը հռոմէտական չէ և որ մեր նախորդները նոյնպէս չեն ընդունել զործադրելու, որպէս օտար պետութիւնից <sup>36</sup>) առնուած մի տիտղոս՝ հետեաբար և ալր Զորքորդ չայքում մենք սահմանում ենք քաղաքացիական։ (civile) վարչութիւն, որ կը լանձնուի քաղաքացիական մի պաշտօնեալի <sup>37</sup>): Սորա իրաւասութեան կ'ենթարկենք նոյնպէս Մարտիրօնոլիտէն <sup>38</sup>) քաղաքը և Դիթարիս կամ Ծիթարիս ամբոցը <sup>39</sup>): Սորա վարչութիւնը սովորական։

<sup>31)</sup> Մեծ Ռոփք։

<sup>32)</sup> Հանձիթ և Հանձիթեցիք ալժմեան Խարբերդ, գաւառ. (Տես նոյնապ. Collection des hist. arm. p. V. Langlois, t. I. p. 221.)

<sup>33)</sup> Մոփք Շահունուու։

<sup>34)</sup> Հաշտեանք և գաւառ Հաշտենից՝ ալժմեան Դիարրէքիրի և Մշու և հանանզների միջում։

<sup>35)</sup> Բալահովիտ Մելիտինէից հիւս արնմ. ուր է ամժմ Բալու քաղաքը (տես և. Chronique de Matth. d'Edesse par Ed. Dulaure. Paris, 1850 p. 103).  
36)

Ալսինքն Պարսկաստանից։

<sup>37)</sup> Խոկ զինուրական վարչութիւնը այս գաւառի՝ Պրոկոպիոսի ասելով, կամրդ լանձնուու է երկու նոր կարգուած զօրավարներին՝ «անդերձ զօրք ի պաշտպանութիւն աշխարհնու, որոնցից մէկի բանակատեղին էր Նվիրկերու քաղաքը, իսկ միւսինը՝ Զիթառուն կամ Կիթառուն ամրոցը, «ի Կողմանս Հաշտենից, և ետ նոցա հրաման շինել և նորոգել զքաղաք և զբերդս ախոցիկ գաւառաց» և ալլն. (Պամլ. թ. 240).

<sup>38)</sup> Մարտիրոսաց քաղաք կամ Նվիրկերու Մուֆարզին։ որ էր այս գաւառի մալրաքաղաքը, միջասահման Աղձնեաց և Մոփաց գաւառների. (Տեղակր. Հ. Մեծ. Ալղան. 1855 43, տես նոյնապ. «Արարատ» 1892 մալիսի տետրակը, և Chronique de Matth. d'Edesse par Ed. Dulaure. Paris, 1850, p. 103.

<sup>39)</sup> Ցիթարիս կամ Զիթառուն քաղաք Հաշտենից. (տես Պատմ. Սեբէստ. Գետերը. 1879, եր. 200, ծան. 85, Հրատ. պրօֆ. Ք. Պատիկ.),

կամ հասարակ հիւպատութեան կարգից կը լինի:  
 Վերոյիշեալ ասածներիս համեմատ՝ Հայաստանի  
 մեր ձեռքով կազմուող ալդ չըս գաւառների կառավա-  
 րիչ—պաշտօնեաներից երկուուր՝ այն է Առաջին Հայ-  
 քում նախագահող փոխ—հիւպատը և նրբորդ Հայքը  
 կառավարող կոմու սպէկտարիլիս աստիճան կրող պաշ-  
 տօնեաներ կը լինին: Իսկ միւս երկու պաշտօնեաները,  
 որոնց կը յանձնուուին Երկրորդ եւ Չորրորդ Հայքի վար-  
 չութիւնները, սովորական կամ հասարակ պաշտօնեա-  
 ների կարգից կը լինին:

Մենք կամենում ենք, որ այդ գաւառներում յայ-  
 տարաբրուող գատական բողոքները հինգ հարիւր (500)  
 սոկէդրամից պակսո գումարներին վերաբերեալ՝ փոխա-  
 նակ նորն գաւառուի մայրաքաղաքում ներկալացուելու,  
 տեղին ամենամօտ սպէկտարիլիս պաշտօնեալին ներ-  
 կալացուին: Ալսպէս՝ Սեբաստիա մայրաքաղաք ունե-  
 ցող Երկրորդ Հայքում յատարարուող դատական բողոք-  
 ները կը վճռուին Առաջին Հայքի փոխ—հիւպատի ձեռ-  
 քով: Իսկ Չորրորդ Հայքում ներկալացուող նոյնաչափ  
 գումարներին վերաբերեալ դատական բողոքները կը  
 ներկալացուին Երրորդ Հայքի կոմուն, որի բնակատե-  
 ղին լինելու է Մելիտինէն <sup>40)</sup>:

### ԳԼՈՒԽ II.

Այս գործերն այսպէս հրամալելուց յետոյ՝ մենք  
 կարեւոր ենք համարում Առաջին Հայքի համար պաշ-  
 տօնի հրաւերել մի ալնպիսի տղամարդ, որ իւր բարձ-  
 րութեամբ և մեզ համար կատարած իւր ծառայու-  
 թիւնների փալով արժանի լինի վարելու այս գաւառի  
 վարչութիւնը: Հետեւքը և՝ գիտենալով որ մեծափառ  
 Թովմասը <sup>41)</sup> արգէն մի քանի պաշտօններ է վարել

<sup>40)</sup> Տես Ժանօթ. 24.

<sup>41)</sup> Հաւանական է երևում, որ այս «Մեծափառ Թովմա-  
 սը» Յուստինիանոս կալսեր այն զօրավարը լինի, որի մասին  
 Պրոկոպիոսը պատմելով ասում է «զօրավար Էր հեծելազօրու-  
 թունաց Յովհան թովմաւեան՝ հաւագդաւ, ալր անհնարին  
 պատերազմող, զոր Քօշ կամ Գուշաղ անուանէին, որու ընդ-  
 ձեռամբ էր և առանձին դունդ մի հալոց» ևն. (Զամչ Բ. 247).

Հայաստանում և որ ընդ սմին՝ որպէս պատռաւոր — շիտակ մարդ, մեզ միշտ հաւատարիմ ծառալած է և դարձեալ ծառալում է եռանդով, ուստի և սորան ենք յանձնում ալդ վարչութիւնը։ Եւ սա ոչ միայն պաշտօն կ'ունենալ նախագահելու Առաջին Հայքի վարչութիւնը, այլ և միւս գաւառների մէջ ևս կատարել կը առաջ ալն, ինչ որ կը յանձնադրաբենք սորան մեր սրբազն հրահանգներով։ Այս հրահանգներով սա կը ծանօթանայ ալն եղանակին, որով պիտի վարուի լիշեալ գաւառների նկատմամբ։

§ I. Հայաստանում, ինչպէս որ լաճախ հրամայել ենք, հոգեւորական դասի <sup>42)</sup> վերաբերմամբ ոչ մի նորամուծութիւն մենք չենք ձեռնարկում։ Ո՛չ մետրոպօլիտական իրաւունքները <sup>43)</sup> և ոչ ձեռնադրութիւնները ոչ մի փոփոխութիւն չը պիտի կրեն։ Այս անձինք, որոնք արդէն ձեռնադրուած են՝ կը պահպանեն առաջուայ պէս իրանց իշխանութիւնը, որ ստանձնել են ձեռնադրութեամբ։ իսկ նախորդ մետրոպօլիտական եպիսկոպոսները կը մնան իրանց աստիճանի կարգի մէջ, ինչպէս որ կան, որովհետև հոգեւորական դասի նկատմամբ մենք բոլորովին մտադիր չենք որ և է նոր բան հրամայելու։

### ԳԼՈՒԽ III.

Որովհետև քաղաքացիական և զինուորական իշխանութիւնը մենք յանձնում ենք Նրորորդ Հայքի կոմսին, ուստի և այս գաւառում եղած զօրքը պարտաւոր է Հնազանդութիւն այս պաշտօնեալի հրամաններին։ Սա զօրապետի նման իշխանութիւն ունենալով կարող է իւր անունով դատաստանի կանչել կամ դատել զինուորներին, տեղեկանալ նոցա վարքի մասին, վերա-

<sup>42)</sup> Հաւանական է որ հալոց հոգեւորականութեան մասին ասուած լինին զիմաւորապէս ալս § 1-ի խօսքերը։

<sup>43)</sup> Յունական Հայաստանի զիմաւոր կամ մարդ քաղաքներում՝ որպէս Մելիտինէի, Նիքերուտի, Սեբաստիաի և ալլոց մէջ, թեմակալ արքեպիսկոպոսը և կամ եպիսկոպոսը մետրոպօլիտ պատուանունն էր կրում, որ և ապա մեր Հայաստանեալց ս. եկեղեցին ևս գործ է ածել։

պահումներ անել նոցա հաստանելի ռոճիկներից և ի-  
րանց պարտաւորութիւններ չը կատարելու դէպքում  
պատժել նոցա: Սա չը պէտք է համբերէ, տանէ, որ  
մեր հպատակների նկատմամբ անիրաւութիւններ գոբ-  
ծեն զինուորները, որոնցից եթէ վնասակար ոք որ և է  
լանցանքի մէջ բռնուէ՝ կոմս—պաշտօնեսն ալդպիսով  
տեղեկացած կը լինի արդէն լանցանքի պատճառներին:  
Վերջապէս սա կ'ունենալ այս կատարեալ իշխանութիւ-  
նը, որ լատուկ է զօրապետներին: Ոորա հրամանա-  
տարութեանն ենք ենթարկում զինուորական բոլոր  
ոլժերն ախպէս, ինչպէս որ ենթարկուած են հսաւ-  
րիայի <sup>44)</sup>: Պահատեան Ֆոխտգիւցի <sup>45)</sup> կոմսերին և  
Լիկառնիայի <sup>46)</sup>, Պիսիդիայի <sup>47)</sup> և Թրակիայի <sup>48)</sup> պրէ-  
տօրներին: Նոցա պէս՝ սա ևս պալատական խորհրդա-  
նոց կ'ունենայ քաղաքացիական գործերի համար և զ'ր-  
քի վրայ էլ բացարձակ իշխանութիւն, բարձրագոյն հե-  
ղինակութեամբ կառավարելով թէ զինուորականներին  
և թէ միւս բոլոր քաղաքացիներին: Կը հսկէ մանաւանդ  
այս բանին, որ իւր գաւառում լանցանքներ չը գոր-  
ծուին՝ աշխատելով միանդս մայն զսպել այն լանցանք-  
ները, որոնց մասին կը տեղեկանալ ինքը: Սա չը պիտի  
խոնարհուի կամ թոյլ գտնուի ոչ մի մասնաւոր, ոչ մի  
զինուորական և կամ պետական կալուածոց վարչու-  
թեանը կցորդ անձի առջև, որովհետև մենք հաւասար  
արդարութեամբ պահպանելով մեր հպատակներին խա-  
ղաղութեան մէջ՝ կամենում ենք որ մեր օրէնքները  
չը մնան առանց ներգործութեան և արհամարուած չը-  
լինին ոմանցից մեր հպատակներից:

### Վերջաբան.

Ձերք գերազանցութիւնը կը հոգալ կատարել տա-  
լու այս ինչ որ մեզ հաճելի թուեցաւ հրամայիլ Հա-

<sup>44, 45, 46, 47)</sup> Կիլիկիայից հիւսուարևմտեան կողմը գլո-  
նուած կալսերական գաւառները Փոքր Ասիաի ըստ հոռմ-  
էին աշխ. տախտակի:

<sup>48)</sup> Կիլիկիայի հարաւարնմ. ծովեղեալ գաւառը (տես  
անդ):

յաստանի չորս գաւառների բաժանման մասին, մանաւանդ Երրորդ Հայքի նկատմամբ, որի համար և գըլ-խաւորասլէս սահմաննեցինք ներկայ օրէնքը: Մեր ձեռքով նշանակած տարեկան ոռճիկները Հայաստանի պաշտօնեաներին կը տրուին ձեր գահոլքից՝ համաձայն առանձին տեղեկագրների<sup>49)</sup>:

Արարեալ Կոստանդնուպօլսում, ապրիլի օրերի 15-ին՝ Բէլիզարիոսի<sup>50)</sup> հիւպատութիւնից յետոյ: (536 ին)

### Նօվելլա XX. տիտլոս. VII, Գլ. III.

Կայսրն Յուստինիանոս սրբազան Դատարանի կրկին անգամ մեծափառ Գահերէց, նախկին հիւպատ և պատքիկ Յովհաննէսին:

### ԳԼՈՒԽ I.

Պրէտոր — գատաւորից և ալլ բողոքներ անելու ժամանակ կարգապահ՝ նուիրակների կամ բարապան-ների ծառայութիւնը պիտի կատարեն դատաւորաց Գա-հերէցի պաշտօնատարները միայն:

Ինչպէս որ ձեր և ելևմտի պաշտօնեալի (quaesitor) ծառայողներին, որպէս և ձեզ երկուսիդ, ի գէպ և յարմար է թուել, որ ձերդ գերազանցութեան պաշտօնատարները միայն կատարեն կարգապահ՝ նուիրակնե-րի (կամ բարապանների՝ appariteurs) ծառայութիւնը՝ պրէտոր — դատաւորից և նախանուանեալ կառավարչից բողոքներ ներկայացնելու ժամանակ, մենք ևս նոյնը վալելու ենք համարում: Ալդ բողոքները առաջուայ պէս կը ներկայացուին և կը դատուին սրբազան ատեա-նում, ուր ելևմտի մեր մեծափառ պաշտօնեան ևս (quaestor)<sup>51)</sup> աթոռակից և արձակուած վճիռներում մաս-նակից կը լինի:

### ԳԼՈՒԽ III

Հայաստանի փոխ — հիւպատի վերաբերմամբ էլ ի

<sup>49)</sup> Շատ հետաքրքիր պիտի լինէին անշուշտ և այս տեղեկագիրները»:

<sup>50)</sup> Տես ծանօթ. 23-րդ ընումայ» № 2, 1902.

Նկատի ունենալով որ այդ գաւառում սահմանած առաջուայ հասարակ վարչութիւնը՝ առանց բան աւելացնելու, վերած եցինք փոխ — հիւպատի վարչութեան, և որ առաջ ձերդ գերազանցութեանն ուղղուած բողոքներ ներկայացնելիս՝ կարգապահ — նուիրակների ծառայութիւնը կատարում էին ձեր պաշտօնատարները, և որ այժմ նոյն այդ ըողոքներն ուղղուելով սրբազան ատեանին՝ ձեզ և եկեմտի մեծափառ պաշտօնեալին յալտնի կը լինին, ուստի և ձեր պաշտօնատարները միայն պիտի շարունակեն կատարել դարձեալ կարգապահ — նուիրակների ծառայութիւնն այնպէս, ինչպէս որ կատարում էին, երբ Հայաստանը հասարակ վարչութիւն ունէր՝ առանց որ և է փոփոխութեան ենթարկելու քողոքների եղանակը:

Արարեալ Կոստանդնուպոլսում, ապրիլ օրերի 15-ին՝ Բէլիզարիսի հիւպատութիւնից լետով: (536-ին)

### Նօվէլլա V III. տիտլոս Ո.

Կայսրն Յուստինիանոս Դատարանի կրկին անգամ Գահերէց, նախկին հիւպատ և պատրիկ Յովհաննէսին:

### ԴԼՈՒԽ 1.

Ծանուցագիր զանազան պաշտօնեաներին և ալլոց լատկացրած ոռճիկներին վերաբերեալ:

§ 22. Երկրորդ Հայքի նախագահի ձեռքով — ինը ուկեղբամ սրբազան ատեանի սպէկտարիլիս երեք քարտուղարներին (chartularius), քսանուշորս՝ պայծառափալլ տրիբուն-նօտարների աւագաթու (primicerius) <sup>52)</sup>

<sup>51)</sup> Quaestor — Քվէստօր կոչումն կրող քաղմատեամկ պաշտօնեաների իրաւասութեանց սահմանները նոյնպէս զանազան փոփոխութիւններ են կրել հռոմա-բիւզանդական պատմութեան շրջաններում: Ներկայ դէպքում՝ որ ես թարգմանում եմ հայերէն «ելեմափ պաշտօնեալ» տիտղոսով, ինչպէս երեսում է սմեծափառ Գահերէցի աթոռակիցն լինելով՝ մած իրաւոնքներ ունէր Յուստինիանոսի ժամանակ ևս, և ըստ J. Toussaintի մի տեսակ «պատզամաւոր էր կայսեր պետական խորհրդում»: (Տես և Gr. En. p. 1146)

պաշտօնեալին, երեք հատ—սորա օգնականին և քառասուն ոսկեդրամ՝ դատարանների մեծափառ գահերէցին խորհրդանոցին՝ հրամանի պատուէլունեղ կատարել տալու համար:

§ 23. Մ' Ե՛ Ճայքի նախագահի ձեռքով ինը ոսկեդրամ սրբազն ատեանի սպէկտարիլիու երեք քարտուղարներին, քսանուչորս՝ պալծառափալլ տրիբունուստարների աւագաթոռ պաշտօնեալին, երեք հատ սորա օգնականին և քսուասուն ոսկեդրամ դատարանների մեծափառ գահերէցի խորհրդանոցին՝ հրամանի պատուէրներ կատարել տալու համար:

§ 43. Առաջին Ճայքի նախագահի <sup>53)</sup> ձեռքով ինը ոսկեդրամ սրբազն ատեանի սպէկտարիլիու երեք քարտուղարներին, տասնուհինգ՝ պալծառափալլ տրիբունուստարների աւագաթոռ պաշտօնեալին, երեք հատ—սորա օկ նականին և երեսունուվեց ոսկեդրամ գատարանների մեծափառ գահերէցի խորհրդանոցին՝ հրամանի պատուէրներ կատարել տալու համար:

### Օթէնսգիրք Թէոդոսիան <sup>54)</sup>.

#### Գիրք XI. տիտլոս I.

Տարեկան տուրքերի և հարկերի մասին:

Օթէնք Կոստանդիանոս Մեծի <sup>55)</sup>).

Համաձայն այս օրէնքի՝ արտաքոյ ներքոգրեալ չորս բացառութիւնից թէ գոյքերի և թէ անձանց վերաբերեալ՝ ոչ ոք ազատ չը պիտի լինի հարկ տալուց:

<sup>52)</sup> Պրիմիցերիուս ալս տիտղոսով էին կոչւում Բիւզանդիակի կալսուների դրան մի քանի գլխաւոր պաշտօնատարները, Primitier des notaires ան պաշտօնեան էր, որ լաւարութեան ելեմտի և զօրքի մատեանն էր պահում։ Սա լաջորդեց քրութեան պահում անցքեր արձանագրող կալսերական դորժակալ պաշտօնեալին։ (Մանօթ. Պ. Շաշեանի, տես նորա բնաբան-գրուածի եր. 162.)

<sup>53)</sup> Զը մոռանամ ասել, որ կալսութեան գաւառների կառավարիչներին նախագահ պատուանուլ ևս մեծարում էին,

<sup>54)</sup> Տես ծան. 4, «Լումար» № 2, 1902.

I. Կալսըն կոստանդիանոս 56) Պրօկլիանիոսին <sup>57)</sup>։ Ի բաց առեալ մեր մասնաւոր գործերը, կաթողիկ եկեղեցիները, փառաւոր լիշտակութեան արժանի մարդունախին հիւպատ և հեծելազօրի ու հետեակազօրի նախկին զօրապետ Եւսեբիոսի գերդաստանը և Հայաստանի թագաւոր Արշակի տոհմը <sup>58)</sup>, [թող ոչ մեր կալսըութեան մէջ ազատ չը լինէ տուրք վճարելուց իւր հալրենական՝ տացուածքի առաջին արդիւնքներից <sup>59)</sup>։

<sup>55)</sup> Թէոդոսիան օրէնսդրքից քաղաք Կոստանդիանոս Մեծի ալս օրէնքը, որպէս և հետևեալ ալս «Հրամանը», «Ռիմբագրուած է երեք կալսըների անունով» (տես եր. 177. ներկայական գրութեան) վերաբերում էին թէ ամբողջ կալսըութեան և թէ հռոմա-բիւզանդական պետութեան հարկատու եղած երկներին, որոնց թւումն էր և Հայաստան աշխարհ»։

Սակայն 315 թուականը միայն, երբ իր թէ գրուած է կ. Պօլսում՝ ոստանդիանոս Մեծի ալս «օրէնքը՝ որպէս և ալս Մեծ կալսեր ուրիշ «Հրովարտակներ» նոյն 315 թուականըն գրուած թիւղան դիոնում, ի միջի ալոց և «ալոց թագաւոր Արշակի անունով տրամածը» (տես իմ ծան. 8, վլումար. № 2, 1902) կասկածելի և սխալ են համարում առ հասարակ. - Պ. Շաշեանն էլ՝ լատիներէն բնադրի համաձայն, հարցական նշան է դնում ալս 315 թուականի կողքին՝ առանց սակայն բացատրելու, (տես եր. 176)։

Հայ պատմա-քննադատական բանասիրութիւնը ևս չօշափելով մասսմբ ալս ինդիրը՝ առարկում է նոյնպէս թէ «315-ին կ Պօլիսը ոչ շնուռած էր և ոչ իսկ կարէր լիւ՝ և նել արքունիք Մեծին Կ-ստանդիանոսի և թէ ալս 315 տառ «բեթիւը տպագրողէն ներմուծուած» լինելով՝ հետեարար և կ. Պօլսում նոյն 315 թ. տրուած «Հրովարտակները՝ աղաւաղեալ» պիտի նկատուին։ (Տես Աղաթանգ. և իւր Բազմազարդարական.՝ քննադատ. Հ. Բ. վ. Սարգիսեանի Վենետ. 1890, եր. 258, և նոյնպ. Ռւսումնաս. Ազաթանգ. Դրոց Հ. Տաշեանի Վիէնն. 1891, եր. 148)։

<sup>56)</sup> Թագաւորեց 316-331։

<sup>57)</sup> Présent մը թթուուր մեծ պաշտօնեան. տես ծան. 2.

<sup>58)</sup> «Հայաստանի թագաւոր Արշակի «տոհմը» ասելով՝ ախտեղ՝ արդիօք Արշակունեաց տոհմ չպիտի հասկացնելի, վասն զի, ինչպէս լալտնի է պատմութիւնից, Կոստանդիանոս Մեծի ժամանակ Արշակ թագաւոր մենք չենք ունեցել, Ուստի և ալս պիտի մի արտօնութիւն, եթէ միայն Կոստանդիանոս Մեծի տուածն է, և կամ մի ալլ կալսեր՝ թէկուղ ժամանակակից Արշակունեաց-

Դատիանոս պատրիկ տոհմից ամենավաճառափառ տնձը, որ ազատուած էր հարկ տալուց՝ այնչափ աշխատեց բառնալ տալու իրանից ալսպիսի շնորհքը, որ չափ ուրիշ անձինք ճիգ են թափում նոյն շնորհքը ստանալու:

Ուրեմն ամենքը պարտաւոր են վճարել այն ինչ որ նշանադրուած կը լինին մեր ձեռքով ստորագրած լանձնարարականների մէջ, և բացի այս նշանագրածից ուրիշ ոչինչ աւելի չի պահանջուիլ ոչ ոքից: Եթէ գաւուի տեղակալ—վերակացուն (vicarius) կամ կառավարէչը (rector) թոյլ տալ իրան զեղչել որևէ հարկատուից առնելիք հարկի մասը՝ նա այդ բանի համար պատասխանատու կը լինի իւր սեպհական գոլքերով:

Տուեալ Կոստանդնուպօլսում, գեկտեմբերի օրերի 15-ին, Կոստանդիանոսի թագաւորելու չորրորդ տարին, չորրորդ հիւպատութեան ժամանակ Լիցինիոսի<sup>60)</sup> (315-ին ?)

Ընդհանրապէս, մասնաւանդ որ բնագրի մէջ առաջ բերուած domus, la famille — բնանիք կամ տուն բառը՝ կարծեմ թագաւորական բոլոր տան մասին առուած պէտք է ենթադրել.

<sup>59)</sup> Ինչպէս երկում է՝ բացի այս «աւրենական ստացուածքի առաջին արդիւնքներից տուրք վճարելու օրէնքից» Թէոդոսիան օրէնսդրքի մէջ նոյն 315 կասկածելի թուականը և մրենոյն լերնագերը կրող հալոց թագաւոր Արշակին արուած մի ուրիշ «առանձնաշնորհութիւն» և կալ եղել, որ—վերելում ասածիս պէս (տես եր. 123 «Հումար» № 2, 1902). Գուցէ պատահմամբ աշքաթող է արել պ. Շաշեանը: Այս «առանձնաշնորհութիւնը» և Սարգիսեանի ասելով՝ (տես ծան. 55), «կոստանդիիսնոսի որդուն «Կոստանդնի առ թագաւորն մեր Արշակ տուած առանձնաւորհութիւնն» է: Սարգիսեանի առաջնորդ կալուածքը, պատ կը մնան ի, հարկաց, վասն դաշնաց կոելոց առ Տրդատաւ և հոստանդիանոսիւց:

Նաշեանի առաջ բերած այս իմ թարգմանած «օրէնքը» և հ. Սարգւսեանի լիշած «առանձնաշնորհութիւնը» անշուշտմիւնոյն բանը չեն, քանի որ առաջինը վերաբերում է «հաւրենական ստացուածքի առաջին արդիւնքներին», իսկ երկրորդը՝ «Բունաստանի մէջ ունեցած կալուածներին», թէև

## ՕՐԵՆՍԳԻՐԸ ԹԷՌՈՂՈՍՆԵՐՆ

ԳԵՐԵՔ ԽՊ. ՄԻՖԱԼՈՒ VI.

ՀՐԱՄԱՆ ՎԱՂԵՆՏԻՒՆԻԱՆՈՍ, ԹԷՌՈՂՈՍԻՈՍ և ԱՐԿԱ-  
ԳԻՈՍ ԿԱԼՍՐՆԵՐԻ<sup>61)</sup> ԴՐԱՄԱՐԱՆԻ ԳՎԱՀԵՐԵՑ (ԲԺ. Բ.) ՍԵ-  
ՆԵԳԻՈՍԻՆ<sup>62)</sup>:

Հարկահաններին և գործակալ—վերակացուներին<sup>63)</sup>  
(receveurs et intendants) վերաբերեալ:

ՄԵՆՔ ՀՐԱՄԱԼԵցինք, որ Հարկահանների ամեն մի-  
դիւան և բոլոր քաղաքները ստանան և ունենան պղնձէ  
կամ քարէ գրուաններ իրանց քսեստերով և կամ կապիճնե-  
րով ու կշռակոտորներով, որպէս զի Հարկատուները աչքի  
առջև ունենալով այս զանազան չափերը, գիտենան թէ  
ինչ պէտք է տան հարկահաններին: Եթէ ուրեմն հար-  
կահաններից մէկը լիշեալ կշռոներից ու չափերից աւե-  
լի բան պահանջէ հարկատուից, թող իմանալ որ այդ  
բանի համար արդար մի պատիժ կը կը ինքը: Եւ մին-  
չև այսօր ժողովրդների շահերի գէմ գործած բոլոր ա-  
րարքների առաջն առնելու համար՝ մենք հրամայում  
ենք, որ Հարկատուները այսուհետև տան հարկահաննե-  
րին ցորենի լիսներորդը, գարու քառասներորդը, գինու

ինչպէս ասում եմ, այս երկու «օրէնքն» էլ մի և նոյն 315  
թուականը, մի և նոյն լատիներէն վերնագիրներն ու վերջ-  
նագիրներն են կրում, որ միան և եթ քաղում է հ. Սարդի-  
սեանը՝ առանց առաջ բերելու լիշեալ «առանձնաշնորհու-  
թեան» բնագիրը ամբողջութեամբ: (Տես նորա վերոլիշեալ  
գիրքը, ծանօթ. 55):

<sup>60)</sup> Նշանաւոր հիւպատ Կոստանդիանոս Մնծի ժամա-  
նակ, որին և փեսալացել էր, և ապա նորա հակառակորդ:  
(Խոր. Գիրք. II. զ. ձ. տես նոյնպ. Hist. à travers les Sci-  
écles par. M. Lachatre, Paris, 1876, t. I. p. 128 և հետևող,  
և «Kaiser Licinius», München 1884.

<sup>61)</sup> Այս Կալսրների (364—408) որպէս և Կոստանդիա-  
նոս Մնծի Հակաստան աշխարհի հետ ունեցած ալլ և ալլ լա-  
րս բերութեանց մանրամասն պատմութիւնը բազմաթիւ պատ-  
մագրներից քաղելով՝ աւանդում է մեզ հ. Զամչ. իւր պատմ.  
հատ. ա. 400—477 և 635—775 եր.

<sup>62)</sup> Մինէգիոսը՝ որ «գատարանի դահերէցի» պաշտօնեա-  
էր (տես ծան. 2): Կալսրութեան հիւպատ ևս եղած է 338-ից  
386 թիւը:

և ճարպի քսաներորդը: Սակայն մարդկալին գործերն  
իրանց պահանջներն ունենալով՝ մենք պարտաւորուե-  
ցանք պատուիրելու որ Հայոսաւանում <sup>64)</sup>), հեռաւորու-  
թեան պատճառով, հարկահաններին տան ցորենի և  
գարու քառասներորդը, իսկ գինու և ճարպի տասնու-  
հինգերորդը:

Ծուեալ Կոստանդնուպօլսում, դեկտեմբերի օրերի 3 ին, ազնուազարմ Հոնորիոսի<sup>65)</sup> և Եվգոդիոսի<sup>66)</sup> հիւ-պատութեանց ժամանակ (386 ին):

6. 84908

<sup>62</sup>) Տես Խոր. գիրք III. զԼ. ԺԲ., իա. Խթ. և ալլն, ուր  
ի միջե ալլոց խօսում է Հայաստանի մէջ եղած ալս կալոր-  
ների «հարկահանների», հալոց տուած հարկերի և բիւզանդա-  
կան» գործարաւ—վերակացուների» մասին:

<sup>65</sup> Զաւակ Թէղոր մնձի և եղբալը Արկադիսի կալորթեան հիւպատ Արևմուտքում, ուր և ապա եղաւ կալոր 395—423։ (En. Univ. p. 340. Gr. En. p. 624 և M. Lachatre p. 175.

<sup>66</sup>) Կալսրութեան հիւպատ Արմելըում: